ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Որքան որ արդէն հարկաւոր ծանօթութիւնները գրինք քայլ առ քայլ յօդուածի զանազան կէտերուն նկատմամբ, սակայն անհրաժեշտ կը տեսնենք հոս ալ, յօդուածի աւարտին, նշանակել քանի մը դիտողութիւններ՝ հարցին լուսաբանութեան համար:

Ամէնէն առաջ հարկ է ըսել թէ յարգելի յօդուածագիրը, որ այնքան աղնիւ և համակիր վերաբերում ունի հայերու մասին և աննախանձ կերպով կը յայտարարէ հայ քահանայի մը առաջնութիւնը Լիվոռնոյի մէջ տպագրութեան, դժբախտաբար անգէտ է հայերէնի, և, ինչպէս կը տեսնուի, լաւ Թարգման – առաջնորդ մ՝ալ չէ ունեցած, որով ոչ միայն անտեղեակ կը մնայ յառաջաբանի և վերջաբանի կարեւոր մանրամասնութիւններուն, այլ նաեւ սխալ ենթադրութեան մէջ կ՝ելնայ իր քաղաքին մէջ լոյս տեսնող անդրանիկ տպագրութեան՝ հայերէն Սաղմոսարանի Թուականին մասին, ինչ որ հիմնական դեր մ՝ունի այս խնդրին մէջ:

Ինչպէս յայտնի է, Սաղմոսարանի ձեռագիրն ստորեւ՝ կարմրագիրով նշանակուած է ՌՂԳ. յետոյ նոյն Թուականն աւելի որոշ կրկնուած է յառաջաբան կազմող նամակին վերջաւորութեան՝ ՌՂԳ. Մայիս ԺԵ, ինչպէս կը տեսնէ ընթերցողը ստորեւ, էջ 229:

Երբորդ, գրքին վերջաբանին մէջ ալ աւելի յետագայ գրուած է. «Տպեցաք զսաղմոսարանդ և աւարտեցաք զսա յամին որ ի ծննդենէն Քրիստոսի՝ ՌՈԹԳ (այսինքն 1643)... և ի թվին որ ըստ հայոց ՌՂԳ ի Մայիսի ամսոյ ի տասն, ի Լիվոռնայ»:

Եւ սակայն յարգելի յօդուածագիրը հայկական Թուականը փոխանակ ՌՂԳի, կը կարդայ ՌՂՍ. և հետեւաբար կը նշանակէ արաբական Թուերով 1091, և Քրիստոսի Թուականին վերածելով կ՝ունենայ 1642:

Հարցն այնքան որոշ է որ, ինչպէս ըսինք, Սաղմոսարանի յառաջաբանն և վերջաբանը ամէն մանրամասնութիւն կու տան լեռվին:

Գրքին տպագրիչ Ջուզայեցի Յովհաննէս Վարդապետ, որ հրամանով իր հոգեւոր հօր Կեսարացի Խաչատուր Վ.ին (ՌՁԸ) 1639ի դեկտեմբերի մէկին Սպահանէն կը մեկնի Իտալիա և յետ երկար աշխատութեան և պատրաստութեան տպագրութեան արուեստին և զանազան գրերու պատրաստութեան Վենետիկ – Հռոմ – Լիվոռնոյ՝ 1643ի Մայիսի 10ին կ՝աւարտէ երախայրիքը իր տպագրութեան 80 օրուան մէջ, 1050 օրինակ տպելով անկէ, աւելցնելով թէ իր ամբողջ աշխատութեան տեւողութիւնը կ՝ըլլայ մինչեւ գործին աւարտը՝ «երեք ամ և հինգ ամիս ողջոյն». այսինքն Ճիշտ 1639ի դեկտեմբերի 1էն մինչեւ 1643ի մայիս տասը. և եթէ տպագրութեան աւարտն է 1643ի մայիս 10, սկիզբը կ՝ըլլայ 1643ի փետր. 19 կամ 20 (աւարտէն 80 օր առաջ):

Սաղմոսարանի Լիվոռնեան այս տպագրութեան մէջ (որ հինգերորդն է ժամանակագրական կարգով, Ա.ը տպուած ըլլալով ի Վենետիկ 1565ին Աբգար դպիրի ձեռքով) բաց ի ուրիշ զանազանութիւններէ, «Հաւատով Խոստովանիմ» աղօթքին մէջ ունի քանի մը նշանակելի տարբերութիւններ. օր. ա, (Զ. տուն) «Ամենեղ բնութիւն»՝ հնագոյն և հաւանօրէն ուղղագոյն ձեւը՝ որ կ՝երեւի նաեւ Ամստերդամեան ինչ ինչ տպագրութեանց մէջ օր. 1664, եւն, փոխանակ ընդհանրացած Ամենեղ-ի:

բ) (Թ. տուն). Ոչ խոսել ստուրեամբ, փոխանակ՝ զստութիւն-ի:

գ) (Ի) յանձն արասցես զանձն իմ, փոխ. զիս-ի:

դ) (ԻԱ) արժանաւորեա զիս, փոխ. արժանաւորեա զհոգի իմ. եւն:

Յօդուածագիրը գովելի ջանքով մը այդ առթիւ ուզած է գծել ընդհանուր պատկերը Լիվոռնոյի մէջ կատարուած հայկական տպագրութեան՝ սկիզբէն մինչեւ վերջերը. հոս ալ դժբախտաբար իր ուշադրութենէն վրիպած են երեք տպագրութիւններ. այսպէս.

ա. Շարական, տպ. 1692ին. դայս չի յիշեր նաեւ Թէոդիկ իր «Տիպ ու Տառ»ին մէջ: (Հմմտ. Հ. Գ. Զարբհանալեան. Պատմ. Հայկ. Տպագր.):

բ. Գիրք Աշխարհաց և առասպելաբանութեանց որ է Աղուէսագիրք. տպ. 1698: (Գիրք աշխարհաց կոչուածը «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյն» գործն է:

գ. Յօդուածագիրը կը մոռնայ դնել նաեւ «Պարզատումար Հռովմէական»ը, տպ. 1702ին, ինչպէս կը նշանակէն Զարբհանալեան և Թէոդիկ: Դժբախտաբար սկիզբէն և վերջէն պա-

կասաւոր է մեր մատենադարանի օրինակը, հետեւաբար չեմ կրնար վճռական բան մ՝ըսել այդ գրքին՝ տպագրութեան տեղւոյն և թուականի մասին:

Հ. Գարեգին Զարբհանալեան և յօդուածագիրը Պելլարմինոսի քրիստոնէականին համար կը դնեն 1670, մինչ իրականին մէջ ան սկսած է տպագրուիլ 1669 Հոկտ. 30ին, և այսպէս ալ՝ 1669 նշանակուած է գրքի բուն ճակատին. իսկ յաջորդ էջին վրայ 1670: Այս գրքի յիշատակութիւնն ալ կը պակսի Թէոդիկի գծած Լիվոռնեան պատկերին մէջ, ինչպէս նաեւ հոսկ «Գործիք չարչարանաց»ը, տպ. 1701ին:

Հ. Գ. Զարբ. (Հմմտ. Պատմ. Հայկ. Տպագր.) ալ չունի «Պատմութիւն դարձի և մկրտութեան Յովհաննու Յովսեփայ Քայաքեան մեծանուն հրեի բարուեւոյ) տպ. 1697ին. (այս գիրքը կը պակսի մեր հայկ. մատենադարանին մէջ):

Իսկ «Թէոփիլոս»ը տպ. 1701ի Յունուարին, զոր յօդուածագիրն և Թէոդիկ կը յիշատակեն իբր Լիվոռնեան տպ., Զարբհանալեան կը հաստատի Կ. Պոլիս տպուած: (Հմմտ. Պատմ. Հայկ. Տպագր. էջ 260):

Այս առթիւ ըսենք որ մեծապէս կասկածելի է 1696 թուականը «Փոնցիանոս»ի գրքին համար: Հաւանօրէն հոս տպուած է, այդ թուական: Հաւանօրէն հոս տպուած է, այդ թուական կանէն առաջ և նոյնը կրկնուած ապա Կ. Պոլսէն 1696ին., ինչպէս եղած են խաչատուր Վ.ի լիս 1696ին., ինչպէս եղած են Խաչատուր Վ.ի լիս 1696ին., ինչպէս եղած են Բերեսիայի բառգիրքը (1696) և Երեմիայի բառգիրքը (1728) որոնց ճակատները արտատպութիւնքը (1728) որոնց ճակատները արտատպութիւնքը հոն գրուած Լիվոռնոյի անունը:

Տեղը չի ներեր հոս երկար խօսել փոխադարձ մատենարանութիւններու մասին Լիվոռնոյ – Ամստերդամ – Մարսիլիա հաստատուած հայկական նշանաւոր տպարաններուն. միայն այսչափ ըսենք որ երեքին մէջ՝ որոնք շարունակական առատ արդիւնաբերութիւն ունեցած են տարիներու ընթացքին՝ ինչպէս Հռոմը և մանաւանդ Վենետիկը, մինչ բացառութեան պէս ցանցառ ու տպագրական հազիւ մէկ մէկ նմոյշ տուած են՝ Փարիզ՝ 1537 (հին շրջան), Փաւիա՝ 1539, Լվով՝ 1616, Միլան՝ 1624, Սուչաւա՝ 1649, Լայպցիկ՝ 1680, Փատուա՝ 1690, եւն) հնագոյնն է Լիվոռնոյ (1643), ուր տպագրական արուեստի առաջին մարզարանը կ՝ըլլայ (կանխաւ Վենետիկի և Հռոմի մէջ հմտանալով) և անկէց կ՝անցնի Ամստերդամ:

Եւ իսկապէս, Ոսկանի Ատուածաշունչի համբաւաւոր տպագրութեան (1666) գրերուն մաս մը Լիվոռնոյ կը պատրաստուին, ինչպէս կ՝ըսէ նոյն ինքն Ոսկան յիշատակարաններուն մէջ:

Ամստերդամի Ա. տպ.ը 1660ին է Մատթէոս գպիր Ծարեցիին ձեռքով, ապա բեմի վրայ կ՝երեւնան Դ.ին՝ Աւետիս և վաստակաւոր Ոսկան վրդ. 1661–1669:

Լիվոռնոյի մէջ 1670–1702ի շրջանին բոլոր տպագրութիւնները կը կրեն «Տպարան Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի Զօրավարի». այդ տպարանը 1661ի տաւններն է որ ծնունդ կ՝առնէ Ամստերդամի մէջ յիշեալ Ծարեցիին և կը տեւէ մինչեւ 1669, ապա կ՝անցնի Լիվոռնոյ 1670ին և կը տեւէ հոն մինչեւ 1702: Մինչ այդ՝ 1673ին կը գործէ նաեւ Մարսիլիոյ մէջ, հոն հաստատուած իբրեւ առաջին հայ տպարան նոյն ինքն Ոսկան Վ.ի ձեռքով այդ թուականին:

Այս երեք տեղերէն զատ նոյնանուն տպարանը կը գործէ Կ. Պոլսի մէջ 1700–1701 և 1676ին ալ Զմիւռնիոյ մէջ:

Յարգելի յօդուածագիրը անտեղեակ որ Ս. Սարգսի անունը մաս կը կազմէ այդ տպարանական կնիքին՝ որուն վրայ կ՝աւելնար «ի յԱլիկուռնայ», դրած է միամտօրէն «nella tipografia di S. Ecimiazin e di S. Sarkis, milite in Ligurna» այսինքն «Տպարանին մէջ Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի՝ որ զօրական է Լիվոռնոյի մէջ», միացնելով երկու անուններ որ իրարու հետ ո՛ և է կապակցութիւն չունին:

Հ. ԵՂԻՍ ՓԻԶԻԿՅԱՆ

digitised by A.R.A.R.@